ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 27.12.1997

- Գլուխ I Ընդհանուր դրույթներ
- Գլուխ II Պետական տուրք վճարողները, նրանց իրավունքները եւ պարտականությունները
- Գլուխ III Պետական տուրքի գանձման օբյեկտները
- Գլուխ IV Պետական տուրքի դրույքաչափերը
- Գլուխ V Պետական տուրքի գծով արտոնությունները
- Գլուխ VI Պետական տուրքը հաշվարկելու, վճարելու, վերադարձնելու կարգը եւ պաշտոնատար անձանց պատասխանատվությունը դրանք պահպանելու համար
- Գլուխ VII Անցումային դրույթներ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է՝

- Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքի հասկացությունը,
- տուրքերի տեսակները եւ դրույքաչափերը,
- տուրք վճարողներին,
- տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները
- եւ կարգավորում է պետական տուրքի հետ կապված մյուս հարաբերությունները:

Հոդված 2. Պետական տուրքի հասկացությունը

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից Հայաստանի Հանրապետության պետական եւ (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր գանձույթ է:

ԳԼՈՒԽ II

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 3. Պետական տուրք վճարողները

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրք վճարողներ են համարվում սույն օրենքի 7 հոդվածով նախատեսված ծառայություններից կամ գործողություններից օգտվող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները (այսուհետ՝ պետական տուրք վճարողներ):

Հոդված 4. Պետական տուրք վճարողների իրավունքները

Պետական տուրք վճարողներն իրավունք ունեն՝

- պահանջել պետական տուրք գանձող մարմնից՝ կատարելու տուրքի հաշվարկ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ վերահաշվարկ.
- վերադասության, ինչպես նաեւ դատական կարգով գանգատարկել պետական տուրք գանձող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունները.
- դիմել համապատասխան պետական մարմիններ՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար.
- ստանալ պետական տուրքի վճարման մասին տեղեկանք.

- սույն օրենքով սահմանված դեպքերում պահանջել եւ ստանալ վերադարձման ենթակա պետական տուրքի գումարը:

Հոդված 5. Պետական տուրք վճարողների պարտականությունները

Պետական տուրք վճարողները պարտավոր են՝

- ժամանակին եւ լրիվ վճարել սույն օրենքով սահմանված պետական տուրքերը.
- պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններ կամ
- պաշտոնատար անձանց ներկայացնել պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը կամ դրանց պատճենները.
- ներկայացնել պետական տուրքի վճարման գծով իրեն վերապահված արտոնությունները հաստատող փաստաթղթերը.
- սույն օրենքով սահմանված դեպքերում պետական բյուջե վճարել պետական տուրքը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները:

Հոդված 6. Պետական տուրքի վճարման պարտավորության դադարումը

Պետական տուրքի վճարման՝ իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների պարտավորությունը դադարում է այդ պարտականության կատարումով, պետական տուրքի վճարումից ազատումով, պետական տուրքի վերացումով կամ օրենքով սահմանված այլ հիմքերով, իսկ ֆիզիկական անձանց համար՝ պարտավորության կատարումով, պետական տուրքի վճարումից ազատումով, պետական տուրքի վերացումով կամ պետական տուրք վճարողի մահվան դեպքում:

ԳԼՈՒԽ III

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԱՆԶՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

Հոդված 7. Պետական տուրքի գանձման օբյեկտները

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝

ա) դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, գանգատների, դատարանների վճիռների դեմ տրվող վճռաբեկ գանգատների, ինչպես նաեւ դատարանների կողմից փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար.

բ) Հայաստանի Հանրապետության պետական արբիտրաժ տրվող հայցադիմումների, ինչպես նաեւ պետական արբիտրաժի վճիռները (որոշումները) վերանայելու վերաբերյալ տրվող դիմումների համար.

գ) նոտարական գրասենյակների կողմից նոտարական գործողություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր եւ դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու եւ դրանցից քաղվածքներ տալու համար.

դ) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումների փոփոխությունների, լրացումների, ուղղումների եւ վերականգնման վկայականներ տալու համար.

ե) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար.

զ) հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար.

է) պետական գրանցման համար.

ը) մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար.

թ) գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար.

ժ) ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար.

ժա) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար.

ժբ) սույն օրենքի 20 հոդվածով սահմանված այլ ծառայությունների կամ գործողությունների համար:

ԳԼՈՒԽ IV

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հոդված 8. Պետական տուրքի դրույքաչափերը

Պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ սույն օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ:

Բազային տուրքի չափ է սահմանվում 1000 դրամը:

«Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ոչ ռեզիդենտ համարվող վճարողների համար բազային տուրքի չափ է սահմանվում պետական տուրքի վճարման պահին ԱՄՆ-ի դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքի կրկնապատիկը:

Հոդված 9. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, գանգատների, դատարանների վճիռների դեմ տրվող վճռաբեկ գանգատների, ինչպես նաեւ դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը

Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, գանգատների, դատարանների վճիռների դեմ տրվող վճռաբեկ գանգատների, ինչպես նաեւ դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետեւյալ դրույքաչափերով.

1. գույքային պահանջով հայցադիմումների համար	հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից
2. ամուսնալուծության մասին հայցադիմումների համար	բազային տուրքի քառապատիկի չափով
3. ամուսնալուծության ժամանակ գույքի բաժանման համար	հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից
4. օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ հոգեկան հիվանդության, տկարամտության հետեւանքով անգործունակ ճանաչված անձանց, ինչպես նաեւ երեք տարուց ոչ պակաս ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց հետ ամուսնալուծության մասին հայցադիմումների համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
5. բնակելի շենքերի վարձակալության պայմանագրի փոփոխման կամ լուծման, ժառանգություն ընդունելու ժամկետի երկարացման, գույքն արգելանքից ազատելու մասին հայցադիմումների եւ ոչ գույքային բնույթի (կամ գնահատման ոչ ենթակա) մյուս հայցադիմումների համար	բազային տուրքի քառապատիկի չափով
6. հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների համար	բազային տուրքի եռապատիկի չափով
7. պետական կառավարման մարմինների եւ պաշտոնատար անձանց կողմից քաղաքացիների իրավունքները եւ ազատությունները ոտնահարող ապօրինի գործողությունների դեմ գանգատների համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
8. դատական վճիռների դեմ ուղղված վճռաբեկ գանգատների համար	հայցադիմումը (հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումը) տալու դեպքում՝ վճարման ենթակա պետական տուրքի, իսկ գույքային վեճերի դեպքում՝ վիճարկվող գումարից ելնելով հաշվարկված տուրքի 30 տոկոսի չափով
9. Երեւան եկած նոր հանգամանքների հետեւանքով գործերի վերանայման վերաբերյալ հայցադիմումների համար	հայցադիմում ներկայացնելու ժամանակ գանձվող պետական տուրքի, իսկ գույքային բնույթի վեճերով՝ վիճարկվող գումարից ելնելով հաշվարկված տուրքի 30 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից
10. դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) տալու համար	բազային տուրքի 50 տոկոսի եւ բացի այդ, պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի տասնհինգ տոկոսի չափով:

Հոդված 10. Պետական արբիտրաժ տրվող հայցադիմումների, ինչպես նաեւ պետական արբիտրաժի վճիռները (որոշումները) վերանայելու վերաբերյալ տրվող դիմումների համար պետական տուրքի դրույքաչափերը

Հայաստանի Հանրապետության պետական արբիտրաժ տրվող հայցադիմումների, ինչպես նաեւ պետական արբիտրաժի վճիռները (որոշումները) վերանայելու վերաբերյալ տրվող դիմումների համար պետական տուրքը գանձվում է հետեւյալ դրույքաչափերով.

1. գույքային պահանջով հայցադիմումների համար	հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից
2. պայմանագրեր կնքելու, դրանցում փոփոխություններ կատարելու կամ լուծելու ժամանակ առաջացած վեճերով հայցադիմումների համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
3. ոչ գույքային բնույթի պահանջով հայցադիմումների, ինչպես նաեւ պետական եւ այլ մարմինների ակտերը լիովին կամ մասամբ անվավեր ճանաչելու մասին դիմումների համար	բազային տուրքի յոթնապատիկի չափով
4. միջնորդ դատարանի կայացրած վճռի հարկադիր կատարման հրաման տալու կամ մերժելու մասին դիմումի համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
5. Հայաստանի Հանրապետության պետական արբիտրաժի վճիռները (որոշումները) վերանայելու, ինչպես նաեւ երեւան եկած նոր հանգամանքների հետեւանքով գործերի վերանայման մասին դիմումների, ոչ գույքային պահանջներով, վեճերով վճիռները (որոշումները) վերանայելու մասին դիմումների համար	հայցադիմում ներկայացնելու ժամանակ գանձվող պետական տուրքի, իսկ գույքային բնույթի վեճերով՝ վիճարկվող գումարից ելնելով հաշվարկված տուրքի 30 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից
6. Հայաստանի Հանրապետության պետարբիտրաժի վճիռների եւ որոշումների, ինչպես նաեւ գործով անցնող այլ փաստաթղթերի պատճենները գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց խնդրանքով պետարբիտրաժից ստանալու համար	բազային տուրքի չափով եւ պատրաստված յուրաքանչյուր էջի համար լրացուցիչ՝ բազային տուրքի տասնհինգ տոկոսի չափով:

Հոդված 11. Նոտարական գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը

Նոտարական գրասենյակները նոտարական գործողությունների համար պետական տուրքը գանձում են հետեւյալ դրույքաչափերով՝

1. բնակելի տների (բնակարանների), շենքերի, կառույցների, այլ շինությունների, ինչպես նաեւ հողի օտարման (բացի նվիրատվությունից) պայմանագրերը հաստատելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
2. ավտոմեքենաների, մոտոցիկլետների եւ այլ ինքնագնաց մեքենաների ու մեխանիզմների օտարման (բացի նվիրատվությունից) պայմանագրերը հաստատելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
3. գրավի (բացառությամբ անշարժ գույքի) մասին պայմանագրի հաստատման եւ գրանցման համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
4. անշարժ գույքի գրավի (հիպոթեկի) պայմանագրի հաստատման համար (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի)	բազային տուրքի տասնապատիկի չափով
	բազային տուրքի չափով

4^1 . գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի գրավի (հիփոթեքի) պայմանագրի հաստատման համար	
5. գնահատման ենթակա այլ պայմանագրերի հաստատման համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
6. նախկինում կնքված պայմանագրերով նախատեսված իրավունքները եւ պարտականությունները հանձնելու մասին գործարքների հաստատման, գույքի բոլոր տեսակների վաճառքի, նվիրատվության, փոխանակության պայմանագրերի հաստատելու համար (բացի սույն հոդվածի 1-4 կետերում նշվածներից)	բազային տուրքի տասնապատիկի չափով
7. գույքի բաժանման պայմանագրերի, երաշխավորության, գնահատման ոչ ենթակա պայմանագրերի հաստատելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
8. կտակների հաստատելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
9. ժառանգության իրավունքի վկայագրեր տալու եւ նվիրատվության պայմանագրեր հաստատելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
10. ամուսնության ժամանակ ձեռք բերված ընդհանուր գույքի (բացառությամբ անշարժ գույքի) նկատմամբ ամուսինների սեփականության իրավունքի վկայագրեր տալու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
11. գույքի տիրապետման, օգտագործման եւ տնօրինման, բաժնեմասերի (փայաբաժինների) եւ ավանդների կառավարման, վարկային գործառնություններ կատարելու իրավունքի լիազորագրեր հաստատելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
12. ավտոտրանսպորտային միջոցները տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու իրավունքի լիազորագրերը հաստատելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
13. այլ լիազորագրեր հաստատելու համար, այդ թվում՝ զանազան անձանցից, ձեռնարկություններից, հիմնարկներից եւ կազմակերպություններից գումարներ, ծանրոցներ, թղթակցություններ ստանալու համար	բազային տուրքի չափով
14. ժառանգական գույքի պահպանմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
15. փաստաթղթերի թարգմանության իսկությունը վավերացնելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
16. կատարողական մակագրություններ անելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
17. փաստաթղթերի պատճենների եւ դրանցից քաղվածքների իսկությունը վավերացնելու համար	բազային տուրքի չափով
18. փաստաթղթերի ստորագրությունների, այդ թվում՝ թարգմանչի ստորագրության իսկությունը վավերացնելու համար	բազային տուրքի չափով
19. նոտարական գրասենյակի գործերում եղած փաստաթղթերի կրկնօրինակները տալու, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների դիմումները նոտարի միջոցով ֆիզիկական եւ իրավաբանական	բազային տուրքի տասնապատիկի չափով

անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններին հանձնելու, ինչպես նաեւ նոտարական այլ գործողություններ կատարելու համար՝ բացառությամբ սույն հոդվածի նախորդ կետերում նշվածների	
20. պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, դիմումներ եւ այլ նախագծեր կազմելու, ինչպես նաեւ տպագրված նախագծերի օրինակելի ձեւեր տրամադրելու եւ լրացնելու համար	բազային տուրքի չափով
21. փաստաթղթերի պատճեններ եւ դրանցից քաղվածքներ հանելու համար	բազային տուրքի չափով
22. նոտարական այլ գործողությունների համար	բազային տուրքի տասնապատիկի չափով:

Նոտարական գրասենյակի շենքից դուրս կատարվող նոտարական գործողությունների համար պետական տուրքը գանձվում է կրկնակի չափով:

Հոդված 12. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքի դրույքաչափերը

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքը գանձվում է հետեւյալ դրույքաչափերով՝

1. ծննդյան գրանցման համար	բազային տուրքի տասը տոկոսի չափով
2. ամուսնության գրանցման համար	բազային տուրքի չափով
3. ամուսնալուծության գրանցման համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
4. ազգանվան, անվան եւ հայրանվան փոփոխություն գրանցելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
5. քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին վկայականների կրկնօրինակը տալու համար	բազային տուրքի կրկնապատիկի չափով
6. հայրություն (մայրություն) ճանաչելու համար	բազային տուրքի չափով
7. որդեգրում գրանցելու համար	բազային տուրքի չափով
8. ծննդյան, ամուսնության, ամուսնալուծության եւ մահվան փաստերը վերականգնելու վկայականները տալու համար	բազային տուրքի չափով
9. քաղաքացիական կացության ակտերի գրանցման առկայության կամ բացակայության մասին տեղեկանք տալու համար	բազային տուրքի կրկնապատիկի չափով
10. քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի կրկնօրինակ ստանալու ծանուցում ուղարկելու համար	բազային տուրքի չափով:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից (բաժնից) դուրս կատարվող քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքը գանձվում է կրկնակի չափով:

Հոդված 13. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար պետական տուրքի դրույքաչափերը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար պետական տուրքը գանձվում է հետեւյալ դրույքաչափերով՝

	բազային տուրքի չափով

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար	
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար	բազային տուրքի 25-պատիկի չափով:

Հոդված 14. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքը գանձվում է հետեւյալ դրույքաչափերով՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տալու համար	բազային տուրքի տասը տոկոսի չափով
2. Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց տրվող կացության վկայականի համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
3. օտարերկրյա քաղաքացիներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետություն հրավերի փաստաթղթեր տալու համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառելու համար	բազային տուրքի չափով
5. ֆիզիկական անձանց հաշվառման հասցեների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի մարմինների կողմից տեղեկանք տալու համար (բացառությամբ արդարադատության, իրավապահ, ֆինանսական, հարկային եւ անշարժ գույքի կադաստր վարող պետական մարմինների պահանջով քաղաքացիներին տրվող տեղեկանքի)	բազային տուրքի չափով
6. օտարերկրյա քաղաքացիներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետությունից ժամանակավորապես մեկնելու եւ Հայաստանի Հանրապետություն վերադառնալու փաստաթղթեր տալու համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերում եւ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կացության վկայականներում այլ պետություններում հինգ տարի ժամկետով վավերական լինելու մասին նշում կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
8. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների կացության կարգավիճակի հետ կապված փաստաթղթեր տալու համար	
ա) Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակ եւ կացության քարտ տալու, ինչպես նաեւ հաշվառելու համար	բազային տուրքի 105-պատիկի չափով
բ) Հայաստանի Հանրապետությունում կացության սովորական կարգավիճակ եւ կացության քարտ տալու, ինչպես նաեւ հաշվառելու համար	բազային տուրքի 80-պատիկի չափով
գ) Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ, հատուկ անձնագիր տալու եւ հաշվառման ու վավերական լինելու մասին նշումներ կատարելու համար	բազային տուրքի 150-պատիկի չափով

դ) Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակի ժամկետը երկարացնելու համար	բազային տուրքի 105-պատիկի չափով
ե) Հայաստանի Հանրապետությունում կացության սովորական կարգավիճակի ժամկետը երկարացնելու համար	բազային տուրքի 80-պատիկի չափով
զ) Հայաստանի Հանրապետությունում կացության սովորական կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիներին վեց ամսից ավելի ժամկետով Հայաստանի Հանրապետությունից բացակայելու թույլտվություն տալու համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
է) Հայաստանի Հանրապետությունում կացության սովորական եւ ժամանակավոր կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիների կացության քարտը վերականգնելու համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
ը) Հայաստանի Հանրապետության կորցրած հատուկ անձնագրի փոխարեն նորը տալու համար	բազային տուրքի 75-ապատիկի չափով:
9. օտարերկրյա քաղաքացիներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագիր ձեւակերպելու հետ կապված ծառայությունների համար	
ա) Հայաստանի Հանրապետություն մեկ անգամվա (մինչեւ երեք օր) մուտքի տարանցիկ արտոնագիր տալու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
բ) Հայաստանի Հանրապետություն բազմակի մուտքի տարանցիկ արտոնագիր տալու համար	բազային տուրքի 18-պատիկի չափով
գ) Հայաստանի Հանրապետություն մուտքի զբոսաշրջիկային արտոնագիր տալու համար	բազային տուրքի 15-պատիկի չափով
դ) մինչեւ մեկ ամիս բնակության ժամկետով մուտքի մեկ անգամվա գործածության երկարաժամկետ արտոնագիր տալու համար	բազային տուրքի 36-պատիկի չափով
ե) մինչեւ երկու ամիս բնակության ժամկետով մուտքի մեկ անգամվա գործածության երկարաժամկետ արտոնագիր տալու համար	բազային տուրքի 48-պատիկի չափով
զ) մինչեւ երեք ամիս բնակության ժամկետով մուտքի մեկ անգամվա գործածության երկարաժամկետ արտոնագիր տալու համար	բազային տուրքի 60-պատիկի չափով
է) մինչեւ մեկ ամիս բնակության ժամկետով մուտքի բազմակի գործածության երկարաժամկետ արտոնագիր տալու համար	բազային տուրքի 54-պատիկի չափով
ը) մինչեւ երկու ամիս բնակության ժամկետով մուտքի բազմակի գործածության երկարաժամկետ արտոնագիր տալու համար	բազային տուրքի 72-պատիկի չափով
թ) մինչեւ երեք ամիս բնակության ժամկետով մուտքի բազմակի գործածության երկարաժամկետ արտոնագիր տալու համար	բազային տուրքի 90-պատիկի չափով
ժ) Հայաստանի Հանրապետություն մուտքի զբոսաշրջիկային արտոնագրով տրված բնակության ժամկետը երկարացնելու յուրաքանչյուր օրվա համար	բազային տուրքի չափով
ժա) Հայաստանի Հանրապետություն մուտքի երկարաժամկետ արտոնագրով տրված բնակության ժամկետը երկարացնելու յուրաքանչյուր օրվա համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
ժբ) արտոնագիրը վերականգնելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
10. Հայաստանի Հանրապետությունից դուրս մշտական բնակության մեկնելու ելքի փաստաթղթեր ձեւակերպելու համար	բազային տուրքի 15-պատիկի չափով

11. Հայաստանի Հանրապետությունից դուրս մշտական բնակության մեկնելու ելքի կորցրած փաստաթղթերը վերականգնելու համար	բազային տուրքի 20-պատիկի չափով:

Հոդված 15. Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքը (հյուպատոսական գանձումը) գանձվում է հետեւյալ դրույքաչափերով.

Դրույքաչափերը գործակիցներով բազային տուրքի նկատմամբ (եթե այլ բան չի նշված)

	ԱՊՀ երկրների համար	Արեւմտյան Եվրոպայի երկրների համար	ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի եւ այլ զարգացած պետությունների համար	Այլ պետությունների համար
1. անձնագրերի հետ կապված հյուպատոսական գործողությունների համար				
ա) օտարերկրյա պետություններում նախկին ԽՍՀՄ քաղաքացու համաքաղաքացիական արտասահմանյան անձնագիր առաջին անգամ տալու կամ փոխանակելու համար	53	79	53	43
բ) օտարերկրյա պետություններում կորցրածի փոխարեն նախկին ԽՍՀՄ քաղաքացու համաքաղաքացիական արտասահմանյան նոր անձնագիր տալու համար	63	106	69	53
գ) օտարերկրյա պետություններում նախկին ԽՍՀՄ քաղաքացու համաքաղաքացիական արտասահմանյան անձնագրի ժամկետը երկարացնելու կամ անձնագրում փոփոխություն կատարելու համար	19	27	19	14
դ) ժամկետանց (երեք ամիս եւ ավելի) նախկին ԽՍՀՄ քաղաքացու համաքաղաքացիական արտասահմանյան անձնագրի ժամկետի երկարացում՝ յուրաքանչյուր ժամկետանց տարվա եւ ոչ լրիվ տարվա համար	9	17	22	6
ե) անձնագրում երեխաներ գրանցելու կամ դուրս գրելու համար	14	27	17	9
զ) անձնագրում ելքի թույլտվությունը նշելու համար	22	38	22	14
է) Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար, եթե անձնագիրը կորցրած է անձնագրի տիրոջ մեղքով	27	32	27	17
ը) այլ դեպքերում Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար	0	0	0	0
թ) օտարերկրյա պետություններ մշտական բնակության ժամանողներին հյուպատոսական հաշվառման վերցնելու համար	22	38	27	17
ժ) հյուպատոսական ժամանակավոր հաշվառման վերցնելու համար (վեց ամսից ավելի գործուղման մեջ գտնվելու դեպքում)	12	32	14	9
ժա) հյուպատոսական հաշվառման մեջ չլինելու դեպքում՝ յուրաքանչյուր տարվա կամ ոչ լրիվ տարվա համար՝ լրացուցիչ	27	32	12	17

2. միջնորդագրեր ձեւակերպելու համար				
ա) օտարերկրյա պետություններում մշտական բնակության թույլտվություն ստանալու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջնորդագրերը ձեւակերպելու համար	132	183	132	53
բ) օտարերկրյա պետություններում ժամանակավոր բնակության թույլտվություն ստանալու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների փաստաթղթերը ձեւակերպելու համար	53	79	53	27
գ) ժամանակավոր հաշվառման ժամկետը երկարացնելու նպատակով՝ յուրաքանչյուր տարվա համար	6	17	6	4
3. օտարերկրյա քաղաքացիներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագրեր ձեւակերպելու համար				
ա) տարանցիկ մուտքի արտոնագիր	9	9	9	9
բ) զբոսաշրջիկային մուտքի արտոնագիր 21 օր ժամկետով առանց հրավերի	16	16	16	16
գ) մեկ անգամվա մուտքի արտոնագիր մինչեւ երեք ամիս ժամկետով պաշտոնական հրավերի հիման վրա	17	17	17	17
դ) բազմակի մուտքի արտոնագիր մինչեւ երեք ամիս ժամկետով պաշտոնական հրավերի հիման վրա	32	32	32	32
ե) դիվանագիտական մուտքի արտոնագիր	0	0	0	0
զ) Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագրի երեք օրվա ընթացքում շտապ ձեւակերպման դեպքում՝ լրացուցիչ 75 տոկոս				
է) Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագրի մեկ օրվա ընթացքում շտապ ձեւակերպման դեպքում՝ լրացուցիչ 100 տոկոս				
4. քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար				
ա) մահվան վկայական տալու համար	0	0	0	0
բ) ծննդյան, ամուսնության, հայրության ճանաչման, որդեգրման եւ այլ վկայականներ տալու համար	22	63	27	17
գ) ամուսնալուծություն գրանցելու եւ վկայական տալու համար	132	157	106	79
դ) ազգանվան, անվան, հայրանվան փոփոխությունը գրանցելու համար	43	79	32	27
ե) կրկնակի վկայականներ տալու համար	12	14	12	6
5. նոտարական գործողությունների համար				
ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից՝ փաստաթղթերը հաստատելու համար	9	27	22	6
բ) օտարերկրյա քաղաքացիներից՝ փաստաթղթեր հաստատելու համար	19	32	27	14
գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից՝ լիազորագրերի նոտարական հաստատման համար	14	27	17	12
	27	32	22	22

դ) օտարերկրյա քաղաքացիներից՝ լիազորագրերի նոտարական հաստատման համար				
ե) գնահատման ենթակա պայմանագրերի եւ գործարքների նոտարական հաստատման համար՝ պայմանագրի ընդհանուր գումարի մեկ տոկոսի չափով, բայց ոչ պակաս քան	12	29	17	9
զ) ավտոտրանսպորտային միջոցների նվիրատվության պայմանագրի նոտարական հաստատման համար՝ պայմանագրում նշված գումարի յոթ տոկոսը				
է) ֆիզիկական անձանցից՝ գնահատման ոչ ենթակա պայմանագրերի նոտարական հաստատման համար	22	29	17	17
ը) իրավաբանական անձանցից, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից՝ գնահատման ոչ ենթակա պայմանագրերի նոտարական հաստատման համար	53	69	53	27
թ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից՝ կրթության, աշխատանքի, քաղաքացիական կացության եւ այլ փաստաթղթերի պատճենների եւ նշված փաստաթղթերից քաղվածքների նոտարական վավերացման յուրաքանչյուր էջի համար	9	29	17	6
ժ) օտարերկրյա քաղաքացիներից՝ կրթության, աշխատանքի, քաղաքացիական կացության եւ այլ փաստաթղթերի պատճենների եւ նշված փաստաթղթերից քաղվածքների նոտարական վավերացման յուրաքանչյուր էջի համար	12	36	22	9
ժա) փաստաթղթերի՝ օտար լեզվից հայերեն թարգմանության եւ նոտարական վավերացման յուրաքանչյուր էջի համար	12	29	22	9
ժբ) փաստաթղթերի՝ հայերենից օտար լեզու թարգմանության եւ նոտարական վավերացման յուրաքանչյուր էջի համար	19	36	27	14
ժգ) քաղաքացու ողջ լինելու, որոշակի վայրում գտնվելու եւ այլ տեղեկանքների ձեւակերպման եւ հաստատման համար	14	27	12	9
ժդ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից՝ ստորագրության իսկության նոտարական վավերացման համար	6	17	17	4
ժե) օտարերկրյա քաղաքացիներից՝ ստորագրության իսկության նոտարական վավերացման համար	12	22	22	6
ժզ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից՝ փաստաթղթերի ընդօրինակված պատճենների իսկության նոտարական վավերացման համար	6	17	17	4
ժէ) օտարերկրյա քաղաքացիներից՝ փաստաթղթերի ընդօրինակված պատճենների իսկության նոտարական վավերացման համար	12	22	22	6
ժը) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից՝ փաստաթղթերի լուսապատճենների իսկության նոտարական վավերացման համար	6	17	17	4

ժթ) օտարերկրյա քաղաքացիներից՝ փաստաթղթերի լուսապատճենների իսկության նոտարական վավերացման համար	12	22	22	6
ի) փաստաթղթերի ընդօրինակման յուրաքանչյուր էջի համար	6	17	17	4
իա) ավտոտրանսպորտային միջոցներ ձեռք բերելու փաստը հավաստող փաստաթղթերի ձեւակերպման համար՝ տվյալ փոխադրամիջոցի արժեքի մեկ տոկոսը, բայց ոչ պակաս, քան	53	69	53	43
6. խնամակալության, ժառանգության եւ այլ գույքային գործեր վարելու համար				
ա) խնամակալ նշանակելու մասին ակտը կազմելու համար	14	17	14	9
բ) ժառանգական գույքը վերգրելու եւ այդ գույքի պահպանման նպատակով միջոցներ ձեռնարկելու համար՝ գույքի արժեքի մեկ տոկոսը, բայց ոչ պակաս, քան	22	14	17	17
գ) շահագրգիռ անձանց խնդրանքով վերգրված գույքի ստուգման համար՝ գույքի արժեքի մեկ տոկոսը, բայց ոչ պակաս, քան	12	12	12	6
դ) կտակի նոտարական հաստատման համար	17	19	17	9
ե) ժառանգատուի խնդրանքով կտակի մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու համար	9	12	9	6
զ) ժառանգության իրավունքի մասին վկայագիր տալու համար՝ ժառանգական գույքի արժեքի մեկ տոկոսը, բայց ոչ պակաս, քան	14	17	17	9
է) ապրանքի կամ այլ գույքի վաճառքի համար՝ ստացված գումարի երեք տոկոսը, բայց ոչ պակաս, քան	27	32	38	17
ը) գտնված կամ պահանջված գույքը հանձնելու համար՝ գույքի արժեքի մեկ տոկոսը, բայց ոչ պակաս, քան	19	24	22	12
թ) փաստաթղթերի փաթեթը պահպանելու համար՝ ամսական	4	6	4	3
ժ) կտակը պահպանելու համար՝ ամսական	6	9	6	4
ժա) դրամը, արժեթղթերը եւ այլ արժեքները (բացի ժառանգական գույքից) պահպանելու համար՝ ամսական ընդհանուր գումարի 0.1տոկոսը				
ժբ) 100 ԱՄՆ-ի դոլարը չգերազանցող ժառանգական կամ այլ գույքը պահպանելու համար՝ ամսական	4	6	4	3
ժգ) 100 ԱՄՆ-ի դոլարը գերազանցող ժառանգական կամ այլ գույքը պահպանելու համար՝ ամսական	9	12	12	6
7. նավերի եւ օդանավերի հյուպատոսական սպասարկման նպատակով տարբեր տեղեկանքների եւ փաստաթղթերի, այդ թվում՝ սանիտարական վկայագրի հավաստման, բեռի մասին տեղեկանք կամ վկայագիր տալու համար	27	12	12	17

8. փաստաթուղթ պահանջելու եւ դրա հիման վրա համապատասխան տեղեկանքներ ձեւակերպելու համար				
ա) մինչեւ հինգ էջի համար	22	27	27	14
բ) հինգ էջից ավելի յուրաքանչյուր էջի համար՝ լրացուցիչ	4	6	4	3
9. այլ ծառայությունների համար	9	6	6	6
10. հյուպատոսական գործողությունները ոչ աշխատանքային ժամերին կատարելու համար՝ յուրաքանչյուր ժամի համար լրացուցիչ				
ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից	6	9	6	4
բ) օտարերկրյա քաղաքացիներից	12	14	12	7

Սույն հոդվածով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված ծախսերը:

Հոդված 16. Պետական գրանցման համար պետական տուրքի դրույքաչափերը

Պետական գրանցման համար պետական տուրքը գանձվում է հետեւյալ դրույքաչափերով՝

1. ձեռնարկությունների, դրանց առանձնացված ստորաբաժանումների (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում նշվածի) սկզբնական պետական գրանցման համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
2. ձեռնարկությունների, դրանց առանձնացված ստորաբաժանումների (բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետում նշվածի) ընթացիկ պետական գրանցման համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
3. անհատական (ընտանեկան) ձեռնարկությունների, դրանց առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաեւ անհատ ձեռներեցների սկզբնական պետական գրանցման համար	բազային տուրքի եռապատիկի չափով
4. անհատական (ընտանեկան) ձեռնարկությունների, դրանց առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաեւ անհատ ձեռներեցների ընթացիկ պետական գրանցման համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
5. բանկերը, ներդրումային հիմնադրամները, ապահովագրական ընկերությունները, կենսաթոշակային հիմնադրամները գրանցելու համար	բազային տուրքի 40-պատիկի չափով
6. օտարերկրյա բանկերի, ներդրումային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների մասնաճյուղերը գրանցելու համար	բազային տուրքի 40-պատիկի չափով
7. Հայաստանի Հանրապետությունում գրանցված բանկերի, ներդրումային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների մասնաճյուղերը գրանցելու համար	բազային տուրքի 20-պատիկի չափով
8. օտարերկրյա բանկերի, ներդրումային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների ներկայացուցչությունները գրանցելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
9. բանկերի գործառնական գրասենյակը (կետը) գրանցելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
10. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարածքային ստորաբաժանումները գրանցելու համար	0

11. մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների պետական գրանցման համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
12. մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների գրանցման վկայականում փոփոխություն կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
13. հասարակական-քաղաքական, հասարակական, կրոնական կազմակերպությունների, արհեստակցական միությունների եւ այլ կազմակերպությունների պետական գրանցման համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
14. հասարակական-քաղաքական, հասարակական, կրոնական կազմակերպությունների, արհեստակցական միությունների եւ այլ կազմակերպությունների գրանցման վկայականում փոփոխություն կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
15. արժեթղթերի թողարկման ազդագրի պետական գրանցման համար (բացառությամբ սեփականաշնորհման հետեւանքով վերակազմավորված բաց բաժնետիրական ընկերությունների արժեթղթերի թողարկման ազդագրի)	բազային տուրքի 12-պատիկի չափով
16. արժեթղթերի պետական գրանցման համար	բազային տուրքի 6-պատիկի չափով
17. ավտոմեքենայի պետական համարանիշ տալու համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
18. ավտոմեքենայի կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար	բազային տուրքի 24-պատիկի չափով
19. օդային փոխադրամիջոցները գրանցելու համար	բազային տուրքի 1000-պատիկի չափով
20. ջրային փոխադրամիջոցները գրանցելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
21. գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման եւ պետական համարանիշներ տալու համար	բազային տուրքի տասնաապատիկի չափով
22. գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների կորցրած պետական համարանիշները վերականգնելու համար	բազային տուրքի քսանապատիկի չափով
23. մոտոփոխադրամիջոցների, կցորդների եւ կիսակցորդների պետական համարանիշներ տալու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
24. մոտոփոխադրամիջոցների, կցորդների եւ կիսակցորդների կորցրած պետական համարանիշները վերականգնելու համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
25. դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին եւ միջազգային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցների պետական համարանիշներ տալու համար	բազային տուրքի 25-պատիկի չափով
26. ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
27. ավտոմեքենայի (մոտոցիկլետի) կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
28. տրանսպորտային միջոցների տարեկան տեխնիկական զննության համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
29. գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տարեկան տեխնիկական զննության համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով

30.տրանսպորտային միջոցները գրանցելու,վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաեւ դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որեւէ գործողություն կատարելու համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
31. օդային փոխադրամիջոցները գրանցելու, վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաեւ դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որեւէ գործողություն կատարելու համար	բազային տուրքի 150-պատիկի չափով
32. ջրային փոխադրամիջոցները գրանցելու, վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաեւ դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որեւէ գործողություն կատարելու համար	բազային տուրքի չափով
33. գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաները գրանցելու, վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաեւ դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որեւէ գործողություն կատարելու համար	բազային տուրքի 50 տոկոսի չափով
34. որսորդական եւ գազային զենքի յուրաքանչյուր միավորը գրանցելու (վերագրանցելու) համար՝	
ա) ֆիզիկական անձանցից	բազային տուրքի վեցապատիկի չափով
բ) իրավաբանական անձանցից եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից	բազային տուրքի 12-պատիկի չափով
35. դեղերի, դեղագործական արտադրանքի, բժշկական նշանակության առարկաների, բժշկական գործիքների, սարքերի եւ տեխնիկայի պետական գրանցման համար՝	
ա) նոր ակտիվ նյութեր պարունակող դեղերի առաջին դեղաձեւի, նոր դեղի նոր դեղաձեւի համար	բազային տուրքի 70-պատիկի չափով
բ) հայտնի դեղերի նոր զուգորդումների համար	բազային տուրքի 40-պատիկի չափով
գ) վերարտադրված (գեներիկ) դեղերի առաջին դեղաձեւի, յուրաքանչյուր հաջորդ դեղաձեւ համար	բազային տուրքի 40-պատիկի չափով
դ) նոր ցուցումների համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
ե) դեղանյութերի պետական գրանցման համար	բազային տուրքի 30-պատիկի չափով
զ) դեղաբույսերի, դրանց զուգորդումների (բուժիչ թեյերի) եւ այլ բնական ծագում ունեցող բուժամիջոցների համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
է) հոմեոպաթիկ դեղերի համար	բազային տուրքի կրկնապատիկի չափով
ը) ախտորոշիչ միջոցների «ին վիվո» (In vivo), կենսաբանական ակտիվ միացություններ պարունակող սննդային հավելումների, բուժական նշանակության մանկական սննդի եւ դեղարարական արտադրանքի համար	բազային տուրքի 20-պատիկի չափով
թ) բժշկական նշանակության առարկաների, բժշկական գործիքների, սարքերի եւ տեխնիկայի 1-ին դասի համար	բազային տուրքի տասնապատիկի չափով

ժ) բժշկական նշանակության առարկաների, բժշկական գործիքների, սարքերի եւ տեխնիկայի 2-րդ դասի համար	բազային տուրքի 20-պատիկի չափով
ժա) բժշկական նշանակության առարկաների, բժշկական գործիքների, սարքերի եւ տեխնիկայի 3-րդ դասի համար	բազային տուրքի 30-պատիկի չափով
ժբ) դեղագործական արտադրանքի, արտադրող ընկերության անվանման, փաթեթավորման եւ արտադրանքի անվտանգության, արդյունավետության եւ որակի վրա չազդող այլ փոփոխությունների հետ կապված գրանցման հավաստագիրը վերաձեւակերպելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
36. անշարժ գույքի պետական գրանցման համար՝	
ա) անշարժ գույքի պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար (բացառությամբ սեփականաշնորհվող պետական, հանրային եւ համայնքային բնակարանային ֆոնդի բնակարանների)	բազային տուրքի հնգապատիկի չափով
բ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տնամերձ, այգեգործական (ամառանոցային) եւ բնակելի տան շինարարության եւ դրա սպասարկման համար հատկացված եւ որպես սեփականություն նրանց անցած հողերի եւ ամրակայված գույքի պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար (բացառությամբ սահմանամերձ, լեռնային եւ ծայրամասային բնակավայրերի)	բազային տուրքի հնգապատիկի չափով
գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային եւ ծայրամասային բնակավայրերում տնամերձ, այգեգործական (ամառանոցային) եւ բնակելի տան շինարարության եւ դրա սպասարկման համար հատկացված եւ որպես սեփականություն նրանց անցած հողերի եւ ամրակայված գույքի պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի չափով
դ) ձեռնարկություններին, կազմակերպություններին սեփականաշնորհված անշարժ գույքի պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի 30-պատիկի չափով
ե) անհատական բնակելի տների, այգետնակների պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
զ) անշարժ գույքի առանձին միավորների (ավտոտնակ, հացատուն, գոմ եւ այլ կառույցներ) պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
է) անշարժ գույքի՝ հողի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի) եւ ամրակայված գույքի օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի 30-պատիկի չափով
ը) գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
թ) կտակի կամ ժառանգման միջոցով ձեռք բերված անշարժ գույքի պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով

ժ) պետական եւ համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության եւ ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցման եւ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
ժա) պետական եւ համայնքային սեփականություն համարվող հողերի վարձակալության եւ ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցման եւ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
ժբ) շենքերի եւ շինությունների վարձակալության եւ ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցման եւ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
ժգ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալության պայմանագրի պետական գրանցման եւ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
ժդ) անշարժ գույքի օգտագործման իրավունքի պայմանագրերի պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
ժե) անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի) գրավի (հիփոթեքի) պայմանագրերի պետական գրանցման եւ անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի) գրավի (հիփոթեքի) վկայական տալու համար	բազային տուրքի 30-պատիկի չափով
ժե[1]) գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի գրավի (հիփոթեքի) պայմանագրերի պետական գրանցման, գրավի (հիփոթեքի) վկայական տալու եւ նշված հողերի գրավի (հիփոթեքի) առարկայի օտարման վրա արգելք դնելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
ժզ) անշարժ գույքի փոխանակման պայմանագրերի պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
ժէ) հողը մշտական օգտագործման հանձնելու որոշումների պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
ժը) հողամասերի սահմանները փոփոխելու, միավորելու եւ բաժանելու մասին պայմանագրերի պետական գրանցման եւ անշարժ գույքի իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
ժթ) անշարժ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման, այդ թվում՝ սերվիտուտի պայմանագրի պետական գրանցման համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
ի) անշարժ գույքի արտոնված օգտագործման իրավունքի արտոնագրի պետական գրանցման համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
իա) անշարժ գույքի նկատմամբ ժամկետային, հայեցողական, անժամկետ, ցմահ իրավազորության պետական գրանցման համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
իբ) անշարժ գույքի սեփականության իրավունքի առանձին իրավազորությունների պետական գրանցման համար	բազային տուրքի հնգապատիկի չափով

իգ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման մասին որոշումների, վճիռների եւ դատավճիռների պետական գրանցման համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
իդ) հողի մշտական օգտագործման եւ հողի ու շենքերի, շինությունների վարձակալության իրավունքի դադարման մասին որոշումների, վճիռների եւ դատավճիռների պետական գրանցման համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
իե) անշարժ գույքից կամ նրա մի մասից սեփականատիրոջ, օգտագործողի հրաժարվելու մասին որոշումների պետական գրանցման համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
իզ) անշարժ գույքի իրավունքի վկայականի կրկնօրինակ տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
իէ) անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) վկայականի կրկնօրինակ տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
իը) անշարժ գույքի վարձակալության իրավունքի վկայականի կրկնօրինակ տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
37. չափիչ սարքերի տիպի պետական գրանցման համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
38. անշարժ հուշարձանների հետախուզության եւ հնագիտական պեղումների թույլտվության եւ պետական գրանցման համար՝	
ա) ֆիզիկական անձանցից	բազային տուրքի կրկնապատիկի չափով
բ) իրավաբանական անձանցից եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից	բազային տուրքի քառապատիկի չափով

Սույն հոդվածի 35-րդ եւ 36-րդ կետերով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված ծախսերը:

Հոդված 17. Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար պետական տուրքի դրույքաչափերը

Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար պետական տուրքը գանձվում է հետեւյալ դրույքաչափերով՝

ա) մինչեւ 40 տարվա վաղեմություն ունեցող մշակութային արժեքները արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար՝ արտահանվող մշակութային արժեքների ընդհանուր գնահատության հինգ տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքից.

բ) 40-ից մինչեւ 100 տարվա վաղեմություն ունեցող մշակութային արժեքները արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար՝ արտահանվող մշակութային արժեքների ընդհանուր գնահատության 15 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի կրկնապատիկից.

գ) 100 եւ ավելի տարվա վաղեմություն ունեցող մշակութային արժեքները արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար՝ արտահանվող մշակութային արժեքների ընդհանուր գնահատության 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի եռապատիկից.

դ) մշակութային արժեքներիը ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար՝ ժամանակավոր արտահանվող մշակութային արժեքների ընդհանուր գնահատության 0.5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի եռապատիկից:

Սույն հոդվածով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված ծախսերը:

Հոդված 18. Գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը

Գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար պետական տուրքը գանձվում է հետեւյալ դրույքաչափերով (բազային տուրքի նկատմամբ գործակիցներով).

1. գյուտերի իրավական պաշտպանության հետ կապված գործողությունների գծով՝		
ա)	գյուտի արտոնագրի հայտ ներկայացնելու համար եթե հայտը վերաբերում է միասնական մտահղացում կազմող գյուտերի խմբի, ապա մեկից ավելի յուրաքանչյուր գյուտի համար՝ լրացուցիչ	20 5
բ)	կոնվենցիայով առաջնություն խնդրարկելու համար	10
գ)	գյուտի նախնական փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	15
դ)	գյուտի ժամանակավոր արտոնագիր տալու համար	15
ե)	գյուտի նկարագրության հրապարակման համար՝ հինգ էջից ավելի յուրաքանչյուր էջի համար	25
զ)	ժամանակավոր արտոնագիր տալու դեմ կամ գյուտի ԽՍՀՄ հեղինակային վկայագրի գործողության դեմ գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	50
է)	գյուտի հայտի ըստ էության փորձաքննություն անցկացնելու համար եթե հայտը վերաբերում է միասնական մտահղացում կազմող գյուտերի խմբի, ապա մեկից ավելի յուրաքանչյուր գյուտի ըստ էության փորձաքննության համար՝ լրացուցիչ	180 90
ը)	գյուտի հայտի ըստ էության փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	20
թ)	գյուտի արտոնագիր տալու համար	15
ժ)	գյուտի արտոնագիր տալու դեմ գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	64
ժա)	հայտատուի բաց թողած ժամկետները վերականգնելու դիմում ներկայացնելու համար	15
ժբ)	գյուտի հայտը օգտակար սարքի հայտի փոխակերպելու դիմում ներկայացնելու համար	10
ժգ)	գյուտի արտոնագիրը գործողության մեջ պահելու համար (յուրաքանչյուր տարվա համար)՝ երկրորդ, երրորդ տարվա համար չորրորդ, հինգերորդ տարվա համար վեցերորդ, յոթերորդ տարվա համար ութերորդ, իններորդ տարվա համար տասներորդ, տասնմեկերորդ տարվա համար տասներկուերորդ, տասներեքերորդ տարվա համար տասնչորսերորդ, տասնհինգերորդ տարվա համար	 20 25 30 38 48 58 68

	տասնվեցերորդ, տասնյոթերորդ տարվա համար տասնութերորդ, տասնիններորդ, քսաներորդ տարվա համար	80 100
ժդ)	արտոնագրի զիջման մասին պայմանագրի գրանցման համար (պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր արտոնագրի համար)	38
ժե)	լիցենզային պայմանագրի գրանցման համար, եթե այն վերաբերում է՝ մեկ արտոնագրի մի քանի արտոնագրի (մեկից ավելի յուրաքանչյուրի համար՝ լրացուցիչ)	60 45
ժզ)	արտոնագրի զիջման մասին գրանցված պայմանագրի կամ գրանցված լիցենզային պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու համար	10
ժէ)	արտոնագրի կրկնակը տալու համար	2
ժը)	գյուտերի՝ Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար	8
ժթ)	գյուտի արտոնագիր ստանալու իրավունքի զիջման մասին դիմում ներկայացնելու համար	15
ի)	փորձաքննության հարցման պատասխանի ներկայացման ժամկետի երկարաձգման մասին հայտատուի կողմից դիմում ներկայացնելու համար	8
2. օգտակար սարքերի իրավական պաշտպանության հետ կապված գործողությունների գծով՝		
ա)	օգտակար սարքի արտոնագրի հայտ ներկայացնելու համար եթե հայտը վերաբերում է միասնական մտահղացում կազմող օգտակար սարքերի խմբի, ապա մեկից ավելի յուրաքանչյուր օգտակար սարքի համար լրացուցիչ	20 5
բ)	կոնվենցիայով առաջնություն խնդրարկելու համար	10
գ)	օգտակար սարքի հայտի փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	15
դ)	օգտակար սարքի արտոնագիր տալու համար	15
ե)	օգտակար սարքի նկարագրության հրապարակման համար՝ հինգ էջից ավելի յուրաքանչյուր էջի համար	2.5
զ)	օգտակար սարքի արտոնագիր տալու դեմ գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	50
է)	հայտատուի բաց թողած ժամկետները վերականգնելու դիմում ներկայացնելու համար	15
ը)	օգտակար սարքի հայտը գյուտի հայտի փոխակերպելու դիմում ներկայացնելու համար	10
թ)	օգտակար սարքի արտոնագիրը գործողության մեջ պահելու համար (յուրաքանչյուր տարվա համար)՝ երկրորդ, երրորդ տարվա համար չորրորդ, հինգերորդ տարվա համար վեցերորդ, յոթերորդ տարվա համար ութերորդ, իններորդ տարվա համար տասներորդ տարվա համար	 20 25 30 38 50
ժ)	արտոնագրի զիջման մասին պայմանագրի գրանցման համար (պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր արտոնագրի համար)	38

ժա)	լիցենզային պայմանագրի գրանցման համար, եթե այն վերաբերում է՝ մեկ արտոնագրի մի քանի արտոնագրի (մեկից ավելի յուրաքանչյուրի համար՝ լրացուցիչ)	60 45
ժբ)	արտոնագրի զիջման մասին գրանցված պայմանագրի կամ գրանցված լիցենզային պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու համար	10
ժգ)	արտոնագրի կրկնակը տալու համար	2
ժդ)	օգտակար սարքերի՝ Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար	8
ժե)	օգտակար սարքի արտոնագիր ստանալու իրավունքի զիջման մասին դիմում ներկայացնելու համար	15
ժզ)	փորձաքննության հարցման պատասխանի ներկայացման ժամկետի երկարացնելու մասին հայտատուի կողմից դիմում ներկայացնելու համար	8
3. արդյունաբերական նմուշի իրավական պաշտպանության հետ կապված գործողությունների գծով՝		
ա)	արդյունաբերական նմուշի արտոնագրի հայտ ներկայացնելու համար եթե հայտը պարունակում է 2-10 տարբերակներ՝ լրացուցիչ եթե հայտը պարունակում է 10-ից ավելի տարբերակներ՝ լրացուցիչ	20 20 20
բ)	կոնվենցիայով առաջնություն խնդրարկելու համար	10
գ)	փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	15
դ)	արդյունաբերական նմուշի արտոնագիր տալու համար	15
ե)	արդյունաբերական նմուշի արտոնագիր տալու դեմ կամ արդյունաբերական նմուշի ԽՍՀՄ վկայագրի գործողության դեմ գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	50
զ)	հայտատուի բաց թողած ժամկետները վերականգնելու դիմում ներկայացնելու համար	15
է)	արդյունաբերական նմուշի արտոնագիրը գործողության մեջ պահելու համար (յուրաքանչյուր տարվա համար) երկրորդ, երրորդ տարվա համար չորրորդ, հինգերորդ տարվա համար վեցերորդ, յոթերորդ տարվա համար ութերորդ, իններորդ տարվա համար տասներորդ, տասնմեկերորդ տարվա համար տասներկուերորդ, տասներեքերորդ տարվա համար տասնչորսերորդ, տասնհինգերորդ տարվա համար	 20 25 30 38 48 58 70
ը)	արտոնագրի զիջման մասին պայմանագրի գրանցման համար (պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր արտոնագրի համար)	38
թ)	լիցենզային պայմանագրի գրանցման համար, եթե այն վերաբերում է՝ մեկ արտոնագրի մի քանի արտոնագրի (մեկից ավելի յուրաքանչյուրի համար՝ լրացուցիչ)	60 45

ժ)	արտոնագրի զիջման մասին գրանցված պայմանագրի կամ գրանցված լիցենզային պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու համար	10
ժա)	արտոնագրի կրկնակը տալու համար	2
ժբ)	արդյունաբերական նմուշների՝ Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար	8
ժգ)	արդյունաբերական նմուշի արտոնագիր ստանալու իրավունքը զիջելու մասին դիմում ներկայացնելու համար	15
ժդ)	փորձաքննության հարցման պատասխանի ներկայացման ժամկետը երկարացնելու մասին հայտատուի կողմից դիմում ներկայացնելու համար	8
4. ապրանքային եւ սպասարկման նշանների իրավական պաշտպանության հետ կապված գործողությունների գծով՝		
ա)	նշանի գրանցման հայտ ներկայացնելու համար	30
բ)	կոնվենցիայով առաջնություն խնդրարկելու համար	10
գ)	նշանի փորձաքննություն անցկացնելու համար ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգմանը համապատասխան մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար՝ լրացուցիչ	40 15
դ)	հայտի նյութերի ստուգումից փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	30
ե)	նշանի փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	50
զ)	հայտատուի բաց թողած ժամկետները վերականգնելու մասին դիմում ներկայացնելու համար	30
է)	նշանի գրանցման եւ վկայական տալու համար կոլեկտիվ նշանի համար	50 90
ը)	նշանը գրանցելու կամ գրանցման գործողության դեմ գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	90
թ)	նշանը գրանցելու գործողության ժամկետը երկարացնելու համար	120
ժ)	նշանների՝ Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում եւ նշանի վկայականում փոփոխություն կատարելու համար	18
ժա)	նշանը զիջելու մասին պայմանագրի գրանցման համար (պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր նշանի համար)	60
ժբ)	լիցենզային պայմանագրի գրանցման համար, եթե այն վերաբերում է՝ մեկ նշանի մի քանի նշանի (մեկից ավելի յուրաքանչյուրի համար՝ լրացուցիչ)	60 50
ժգ)	գրանցված լիցենզային պայմանագրի կամ զիջման մասին պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու համար	25
ժդ)	նշանի վկայականի կրկնակը տալու համար	2
ժե)	նշանի միջազգային գրանցման հայտ ներկայացնելու համար	50
ժզ)	Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապրանքային նշանների տվյալների հիմնապաշարում յուրաքանչյուր դասով որոնում անցկացնելու համար	20

ժէ)	ապրանքային նշանի վկայական ստանալու իրավունքը զիջելու մասին դիմում ներկայացնելու համար	38
ժը)	փորձաքննության հարցման պատասխանի ներկայացման ժամկետը երկարաձգելու մասին հայտատուի կողմից դիմում ներկայացնելու համար	8
ժթ)	հայտատուի նախաձեռնությամբ ապրանքային նշանի հայտի նյութերում լրացումներ, ճշգրտումներ եւ ուղղումներ կատարելու համար	10
5. ապրանքների ծագման տեղանունների իրավական պաշտպանության հետ կապված գործողությունների գծով՝		
ա)	ապրանքի ծագման տեղանվան գրանցման եւ (կամ) տեղանվան օգտագործման իրավունքի հայտ ներկայացնելու համար	30
բ)	ապրանքի ծագման տեղանվան փորձաքննություն անցկացնելու համար	38
գ)	հայտի նյութերի ստուգումից փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	30
դ)	տեղանվան գրանցումը մերժելու եւ (կամ) տեղանվան օգտագործման իրավունք չընձեռելու մասին փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	50
ե)	հայտատուի բաց թողած ժամկետները վերականգնելու մասին դիմում ներկայացնելու համար	30
զ)	ապրանքի ծագման տեղանունն օգտագործելու իրավունքի վկայական տալու համար	50
է)	ապրանքի ծագման տեղանվան գրանցման եւ տեղանվան օգտագործման իրավունքի վկայական տալու դեմ գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	90
ը)	ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայականի գործողության ժամկետը երկարացնելու համար	100
թ)	ապրանքի ծագման տեղանվան՝ Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում եւ ապրանքի ծագման տեղանվան վկայականում փոփոխություն կատարելու համար	18
ժ)	փորձաքննության հարցման պատասխանը ներկայացնելու ժամկետը երկարացնելու մասին հայտատուի կողմից դիմում ներկայացնելու համար	8
ժա)	հայտատուի նախաձեռնությամբ ապրանքի ծագման տեղանվան հայտի նյութերում լրացումներ, ճշգրտումներ եւ ուղղումներ կատարելու համար	10
ժբ)	ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայականի կրկնակը տալու համար	2
6. ֆիրմային անվանումների իրավական պաշտպանության հետ կապված գործողությունների գծով՝		
ա)	ֆիրմային անվանման հայտ ներկայացնելու, փորձաքննություն անցկացնելու եւ վկայական տալու համար համար՝ ձեռնարկությունների (բացառությամբ անհատական (ընտանեկան) ձեռնարկությունների, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների, երաշխավորությամբ գործող ձեռնարկությունների) անհատական (ընտանեկան) ձեռնարկությունների, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների, երաշխավորությամբ գործող ձեռնարկությունների	5 2
բ)	փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար	5
գ)	ֆիրմային անվանման վկայականի կրկնակը տալու համար	2

7. ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված գործողությունների գծով՝		
ա)	ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի գրանցման հայտ ներկայացնելու եւ վկայական տալու համար	20
բ)	ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի նկատմամբ գույքային բացառիկ իրավունքները զիջելու մասին պայմանագրի գրանցման համար	30
գ)	ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի նկատմամբ գույքային իրավունքները փոխանցելու պայմանագրի գրանցման համար	20
դ)	ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի գրանցման վկայականի կրկնակը տալու համար	2
8. այլ գործողությունների գծով՝		
ա)	արտոնագրային տեղեկատվության յուրաքանչյուր էջի համար (այդ թվում՝ ձեւաթղթերի)	0.2
բ)	արդյունաբերական սեփականության օբյեկտների՝ Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյաններից քաղվածքներ տալու համար (յուրաքանչյուր օբյեկտի համար)	2
գ)	արդյունաբերական սեփականության օբյեկտի հայտի վավերացված պատճենը տալու համար	10
դ)	գյուտի միջազգային հայտի առաքման համար	32
ե)	Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի համաձայն փորձաքննության պահանջներին (ձեւական հատկանիշներով) հայտի համապատասխանությունը ստուգելու եւ առաքելու համար	30
զ)	արտոնագրային հավատարմատարի թեկնածուի որակավորման համար	8
է)	արտոնագրային հավատարմատարի գրանցման համար	4:

Գյուտի հայտին կից արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի (PCT) համաձայն, որեւէ միջազգային մարմնի կազմած միջազգային որոնման հաշվետվություն կամ միջազգային նախնական փորձաքննության եզրակացություն ներկայացնելու դեպքում սույն հոդվածի 1-ին կետի ը) ենթակետով սահմանված դրույքաչափերը նվազեցվում են 50 տոկոսով:

Հոդված 19. Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար պետական տուրքի դրույքաչափերը

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար պետական տուրքը գանձվում է հետեւյալ դրույքաչափերով.

1. բժշկական եւ դեղագործական գործունեություն իրականացնելու համար՝	
ա) միջին բուժաշխատողներից եւ դեղագործներից	բազային տուրքի չափով
բ) բժիշկներից եւ դեղագետներից	բազային տուրքի եռապատիկի չափով
գ) իրավաբանական անձանցից եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից	բազային տուրքի տասնապատիկի չափով
2. բանկային գործունեություն իրականացնելու համար՝	
ա) բանկերից	բազային տուրքի 3000-պատիկի չափով

բ) օտարերկրյա բանկերի մասնաճյուղերից	բազային տուրքի 3000-պատիկի չափով
3. ապահովագրական գործունեություն իրականացնելու համար	բազային տուրքի 600-պատիկի չափով
4. խաղատների գործունեություն կազմակերպելու համար	բազային տուրքի 3000-պատիկի չափով
5. շահումներով խաղեր եւ վիճակախաղեր կազմակերպելու համար	բազային տուրքի 600-պատիկի չափով
6. ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար	բազային տուրքի 50-պատիկի չափով
7. լիցենզավորման ենթակա գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
8. ֆիզիկական անձանցից (բացի սույն հոդվածի 1-7 կետերում նշված դեպքերի)	բազային տուրքի 12-պատիկի չափով
9. իրավաբանական անձանցից եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից (բացի սույն հոդվածի 1-7 կետերում նշված դեպքերի)	բազային տուրքի 24-պատիկի չափով:

Հոդված 20. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը

Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքը գանձվում է հետեւյալ դրույքաչափերով.

1. վարորդական իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
2. վարորդական իրավունքի կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար	բազային տուրքի 24-պատիկի չափով
3. օդային եւ ջրային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
4. օդային եւ ջրային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայականի կրկնօրինակ տալու համար	բազային տուրքի 24-պատիկի չափով
5. գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների վարման իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի եռապատիկի չափով
6. գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների վարման իրավունքի վկայականի կրկնօրինակ տալու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
7. տարանցիկ համարանիշ տալու համար	բազային տուրքի եռապատիկի չափով
8. պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների (գործողությունների) մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) տրամադրման համար յուրաքանչյուր քննությունը ընդունելու համար (բացառությամբ բժշկական եւ դեղագործական գործունեության լիցենզավորման համար քննությունների)	բազային տուրքի եռապատիկի չափով
9. Հայաստանի Հանրապետությունից արտահանվող եւ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ծագման երկրի հավաստագիր տալու համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
10. փորձարկումներ կատարելու վկայագիր տալու համար	

	բազային տուրքի 12-պատիկի չափով
11. սերտիֆիկացում կատարելու իրավունքի վկայագիր տալու համար	բազային տուրքի 24-պատիկի չափով
12. արտասահմանյան երկրներից ներկրվող գյուղատնտեսական մթերքների կարանտինային թույլտվություն տալու համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
13. արտասահմանյան երկրներից ներկրվող գյուղատնտեսական մթերքների «Բ» սերիայի սերտիֆիկատ տալու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
14. գյուղատնտեսական մթերքների (բացի անտառանյութից) արտահանման սերտիֆիկատ տալու համար՝	
ա) բեռնատար ավտոմեքենայով	բազային տուրքի հնգապատիկի չափով
բ) մարդատար ավտոմեքենայով	բազային տուրքի 150 տոկոսի չափով
15. անտառանյութի արտահանման սերտիֆիկատ տալու համար՝	
ա) յուրաքանչյուր ավտոմոբիլի կամ կոնտեյների համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
բ) յուրաքանչյուր վագոնի համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
16. տարանցիկ բուսական ծագում ունեցող բեռների կարանտինային թույլտվություն տալու համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
17. կարանտինի ենթակա բեռնանյութերը հանրապետության ներսում փոխադրելու կարանտինային թույլտվություն տալու համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
18. կարանտինի ենթակա բեռնանյութերը նույն մարզի տարածքում իրացնելու թույլտվություն տալու համար	բազային տուրքի չափով
19. առանց կարանտինային սերտիֆիկատների ներկրված մթերքները ստուգելուց հետո վաճառքի թույլտվություն տալու համար	բազային տուրքի չափով
20. պետական անասնաբուժական հսկողության ենթակա կենդանները (ներառյալ՝ անասունները, թռչունները, ձկները, միջատները) մեկ վարչական տարածքից մեկ այլ վարչական տարածք փոխադրելու դեպքում՝ յուրաքանչյուր անասնաբուժական 1-ին ձեւի վկայական տալու համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
21. պետական անասնաբուժական հսկողության ենթակա անասնապահական մթերքը եւ հումքը մեկ վարչական տարածքից մեկ այլ վարչական տարածք փոխադրելու դեպքում՝ յուրաքանչյուր անասնաբուժական 2-րդ ձեւի վկայական տալու համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
22. պետական անասնաբուժական հսկողության ենթակա տեխնիկական հումքը եւ կենդանիների կերերը մեկ վարչական տարածքից մեկ այլ վարչական տարածք փոխադրելու դեպքում՝ յուրաքանչյուր անասնաբուժական 3-րդ ձեւի վկայական տալու համար	բազային տուրքի կրկնապատիկի չափով

23. պետական անասնաբուժական հսկողության ենթակա բեռները տվյալ տարածաշրջանի տարածքում փոխադրելու դեպքում՝ յուրաքանչյուր անասնաբուժական 4-րդ ձեւի վկայական տալու համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
24. պետական անասնաբուժական հսկողության ենթակա օբյեկտների փորձաքննություն անցկացնելու եւ եզրակացություն տալու համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
25. իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կողմից զենքի յուրաքանչյուր միավորի ձեռքբերման, պահպանման թույլտվություն տալու համար	բազային տուրքի քառապատիկի չափով
26. իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կողմից պայթուցիկ նյութեր ձեռք բերելու թույլտվություն տալու, տեղափոխելու եւ պահպանելու համար	բազային տուրքի 24-պատիկի չափով
27. իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կողմից թունավոր, ռադիոակտիվ եւ իզոտոպային նյութեր ձեռք բերելու թույլտվություն տալու, տեղափոխելու եւ պահպանելու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
28. կնիքի եւ դրոշմակնիքի պատրաստման թույլտվություն տալու համար՝	
ա) բյուջետային հիմնարկներից	բազային տուրքի եռապատիկի չափով
բ) այլ իրավաբանական անձանցից, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից եւ ֆիզիկական անձանցից	բազային տուրքի վեցապատիկի չափով
29. շինություն քանդելու եւ շինարարության թույլտվություն տալու համար	բազային տուրքի 18-պատիկի չափով
30. Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղեւորների) ելքի համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
31. «Հայ», «Հայաստան», «հայկական», «Հանրապետություն», «հանրապետական» բառերը եւ դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն տալու համար՝ տարեկան	բազային տուրքի 600-պատիկի չափով

ԳԼՈՒԽ V

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 21. Պետական տուրքի գծով արտոնությունների տեսակները

Պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետեւյալ արտոնությունները՝

ա) պետական տուրքի վճարումից ազատում.

բ) պետական տուրքի նվազեցում.

գ) պետական տուրքի դրույքաչափի նվազեցում.

դ) պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում.

ե) պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

Հոդված 22. Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները

Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են.

ա) բոլոր հայցվորները՝ աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման եւ աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով.

բ) բոլոր հայցվորները՝ ալիմենտի գանձման վերաբերյալ հայցերով.

գ) բոլոր հայցվորները՝ խեղման կամ առողջության այլ վնասման, ինչպես նաեւ կերակրողի մահվան հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

դ) սոցիալական ապահովագրության եւ սոցիալական ապահովության մարմինները՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին վճարված թոշակի եւ նպաստի գումարները վնաս պատճառողից գանձելու վերաբերյալ ռեգրեսիվ հայցերով.

ե) բոլոր հայցվորները՝ հանցագործության հետեւանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

զ) Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավասու մարմինները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման հետեւանքով պետությանը պատճառված վնասի փոխհատուցման գումարները պետական բյուջե գանձելու վերաբերյալ հայցերով.

է) բոլոր հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների եւ շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող դիմումների գծով.

ը) ֆինանսական, հարկային, մաքսային եւ պետական գրանցման համար լիազորված մարմինները՝ հատուկ վարույթի կարգով քննվող գործերի վերաբերյալ հայցերով.

թ) իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները եւ ֆիզիկական անձինք՝

- գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, վճիռների կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, վճիռների կատարման եղանակը եւ կարգը փոփոխելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով.
- երեւան եկած նոր հանգամանքների հետեւանքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ գանգատներով.
- դատարանների վճիռներով նշանակված տուգանքների զիջման կամ նվազեցման վերաբերյալ հայցերով.
- դատարանների վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով, բաց թողնված ժամկետները վերականգնելու, ինչպես նաեւ դատական կատարածուների գործողությունները գանգատարկելու վերաբերյալ դիմումներով.
- տուգանքների զիջումը կամ նվազեցումը մերժելու մասին դատարանների որոշումների դեմ գանգատներով, դատարանների որոշումների դեմ մյուս գանգատներով.
- վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ գանգատներով.
- մշակութային արժեքները ապօրինի տիրապետողից հետ պահանջելու մասին հայց ներկայացնելիս.

ժ) դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով.

ժա) որպես հայցվոր հանդես եկող ֆինանսական, հարկային եւ մաքսային մարմինները, սեփականաշնորհման եւ ապապետականացման հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը՝ վճարումները բյուջե գանձելու, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ձեռնարկությունը, հիմնարկը, կազմակերպությունը լուծարելու կամ անվճարունակ ճանաչելու, սեփականաշնորհման եւ ապապետականացման գործարքներն անվավեր ճանաչելու, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման համար նշանակված տույժերն ու տուգանքները բռնագանձելու վերաբերյալ հայցերով.

ժբ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը.

ժգ) վճռաբեկ գանգատ տվող անձի կողմից դատավարության ընթացքում հանդես եկած դատավարության մասնակիցները եւ երրորդ անձինք՝ գանգատին միանալու վերաբերյալ հայցերով:

Հոդված 23. Հայաստանի Հանրապետության պետական արբիտրաժում պետական տուրքի գծով արտոնությունները

Հայաստանի Հանրապետության պետական արբիտրաժում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) սոցիալական ապահովագրության եւ սոցիալական ապահովության մարմինները՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին վճարված թոշակի եւ նպաստի գումարները վնաս պատճառողից գանձելու վերաբերյալ ռեգրեսիվ հայցերով.

բ) բոլոր հայցվորները՝ տուգանքները եւ տույժերը, ինչպես նաեւ պետությանը պատճառված վնասի գումարները պետական բյուջե գանձելու վերաբերյալ հայցերով.

գ) դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով.

դ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

Հոդված 24. Նոտարական գործողություններ իրականացնող մարմիններում պետական տուրքի գծով արտոնությունները

Նոտարական գործողություններ իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են.

ա) ֆիզիկական անձինք՝ պետության օգտին կտակի կամ գույքի նվիրատվության պայմանագիրը հաստատելու համար.

բ) ֆինանսական եւ հարկային մարմինները՝ ժառանգության իրավունքով պետությանն անցած գույքի մասին նրանց վկայագիր կամ վկայագրի կրկնօրինակ տալու, ինչպես նաեւ դրանց ստացման անհրաժեշտ փաստաթղթեր տալու համար.

գ) ֆիզիկական անձինք՝ ժառանգության իրավունքի մասին նրանց վկայագիր տալու համար, եթե՝ գույքը պատկանել է այնպիսի անձանց, ովքեր զոհվել են նախկին ԽՍՀՄ-ը կամ Հայաստանի Հանրապետությունը պաշտպանելիս, պետական կամ հասարակական այլ պարտականություններ կատարելիս, կամ այն կապված է եղել մարդկային կյանքը փրկելու, իրավակարգի պաշտպանության գծով նախկին ԽՍՀՄ եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացու պարտքը կատարելու հետ.

բնակելի տունը (բնակարանը) կամ բնակարանային-շինարարական կոոպերատիվում փայը անցնում է ժառանգատուի հետ համատեղ բնակվող այնպիսի անձանց, ովքեր ժառանգատուի մահվան օրվա դրությամբ եղել են հաշվառված նույն տանը եւ նրա մահից հետո շարունակում են բնակվել այնտեղ.

ժառանգության իրավունքի օբյեկտ են համարվում բանկերում եղած ավանդները, անձնական եւ գույքային ապահովագրության գծով ապահովագրական գումարները, պետական փոխառության պարտատոմսերը, աշխատավարձի գումարները.

դ) ֆիզիկական անձինք՝ թոշակների եւ նպաստների ստացման վերաբերյալ լիազորագրերը հաստատելու համար.

ե) մայրերը՝ բազմազավակության շքանշաններով եւ մեդալներով իրենց պարգեւատրելու մասին փաստաթղթերի պատճենների իսկությունը վավերացնելու համար.

զ) այն քաղաքացիների ժառանգները, ովքեր իրենց աշխատանքի (ծառայության) վայրում ձեռնարկությունների եւ կազմակերպությունների հաշվին ապահովագրված են եղել դժբախտ պատահարի հետեւանքով մահվան կամ զոհվելու դեպքերից՝ ապահովագրական վարձատրության ժառանգման իրավունքը հաստատող վկայագիր տալու համար.

է) երկրորդ աշխարհամարտի հաշմանդամները եւ այն անձինք, ովքեր հաշմանդամ են դարձել Հայաստանի Հանրապետությունը, նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական այլ պարտականություններ կատարելիս վիրավորվելու, կոնտուզիայի, խեղման կամ ռազմաճակատում գտնվելու հետ կապված հիվանդության հետեւանքով, նախկին պարտիզան հաշմանդամները, ինչպես նաեւ կենսաթոշակային օրենսդրությանը համապատասխան զինծառայողների՝ վերը նշված խմբերին հավասարեցված մյուս հաշմանդամները, երկրորդ աշխարհամարտում Հայաստանի Հանրապետությունը, նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական այլ պարտականություններ կատարելիս զոհված կամ անհայտ կորած անձանց ընտանիքի անդամները՝ վերոհիշյալ հիմքերով արտոնություններ վերապահելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենների իսկությունը վավերացնելու համար.

ը) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

Հոդված 25. Քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի գծով արտոնությունները

Քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) կրթության համակարգի մարմինները, անչափահասների գործերով հանձնաժողովները՝ ծնողազուրկ եւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բոլոր տեսակի գիշերօթիկ հիմնարկներ եւ ուսումնական հաստատություններ ուղարկելու կապակցությամբ ծննդյան վկայականների կրկնօրինակներ տալու համար.

բ) քաղաքացիները՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման ժամանակ, գրանցող մարմնի աշխատակցի թույլ տված սխալների հետ կապված, գրանցումներում փոփոխություններ, լրացումներ եւ ուղղումներ կատարելու դեպքերում՝ նոր վկայականներ տալու համար.

գ) ամուսինները՝ ամուսնության գրանցման ժամանակ իրենցից մեկի ազգանունը որպես ամուսնական ընդհանուր ազգանուն ընտրելու դեպքում.

դ) անչափահաս երեխաների ակտային գրանցումներում ծնողի ազգանունը կամ անունը փոփոխելու կապակցությամբ կատարվող ուղղումների համար:

Հոդված 26. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի եւ մատուցվող ծառայությունների համար պետական տուրքի գծով արտոնությունները

1. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների կացության կարգավիճակի հետ կապվածփաստաթղթեր տալու, Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագիր ձեւակերպելու հետ կապված ծառայությունների համար պետական տուրքի վճարումից ազատվում են.

ա) Հայաստանի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի եւ կառավարության կողմից աշխատանքի հրավիրված օտարերկրյա մասնագետներն ու նրանց ընտանիքի անդամները.

բ) Հայաստանի Հանրապետությանը մարդասիրական եւ տեխնիկական օգնություն ցույց տալու նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող անձինք: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության եւ բարեգործական ու տեխնիկական (այլ) բնույթի իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնությունը կոորդինացնող լիազորված մարմինը.

գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու մերձավոր ազգականները (ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր).

դ) քաղաքական անկայուն իրավիճակի պատճառով ապաստան փնտրող կամ փախստականի կարգավիճակ ունեցող անձինք.

ե) Հայաստանի Հանրապետության կրթօջախներում սովորող օտարերկրյա ուսանողները.

զ) մինչեւ 18 տարեկան անձինք.

է) դիվանագիտական անձնագրերով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող անձինք, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հիմնարկների աշխատակիցներն ու նրանց ընտանիքի անդամները.

ը) Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, սահմանադրական դատարանի նախագահի, վարչապետի կամ արտաքին գործերի նախարարի հրավերով Հայաստանի Հանրապետություն այցելող պաշտոնական անձինք եւ պատվիրակությունների անդամները:

2. Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագիր տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են.

ա) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները.

բ) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության նախնական համաձայնությամբ բուժման նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող անձինք.

գ) կացության հատուկ կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք.

դ) քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով որպես կողմ, վկա կամ փորձագետ՝ Հայաստանի Հանրապետության եւ այլ պետությունների դատարաններ կամ նախաքննական մարմիններ հրավիրվող անձինք:

Հոդված 27. Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար պետական տուրքի գծով արտոնությունները

Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) արտահանվող մշակութային արժեքների հեղինակները, նրանց ընտանիքի անդամները (ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր), իսկ հեղինակի մահից հետո՝ նրա ժառանգը.

բ) Հայաստանի Հանրապետության, այլ պետությունների պետական պարգեւներով, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների պարգեւներով պարգեւատրված անձինք՝ այդ պարգեւների գծով.

գ) առաջին եւ երկրորդ խմբի հաշմանդամ հեղինակի կողմից լիազորված՝ նրա ստեղծած մշակութային արժեքների արտահանում կամ ժամանակավոր արտահանում իրականացնող անձը.

դ) թանգարանները, արխիվները, գրադարանները, մշակութային արժեքների այլ պահոցները՝ իրենց ֆոնդերում մշտական պահպանության տակ գտնվող մշակութային արժեքները ժամանակավոր արտահանելու ժամանակ.

ե) երաժշտական համույթները, երաժիշտ կատարողները՝ հյուրախաղերի կամ ուսանելու նպատակով իրենց հետ ժամանակավոր արտահանվող երաժշտական գործիքների, առարկաների եւ նվագարանների համար:

Այն անձինք, ովքեր պետությանը նվիրում են մշակութային արժեքներ, որոնք գրանցված են կամ ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահպանական ցուցակներում կամ գրանցման մատյաններում՝ նվիրաբերված մշակութային յուրաքանչյուր արժեքի դիմաց մեկ անգամ օգտվում են արտահանման իրավունքի վկայագիր ստանալու համար պետական տուրքի 50 տոկոս զեղչի իրավունքից:

Հոդված 28. Գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար պետական տուրքի գծով արտոնությունները

Պետության կողմից գաղտնի ճանաչված գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան պետական տուրք չի վճարվում:

Արտոնագրատիրոջ կողմից արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործման իրավունքն այլ անձի տալու մասին հայտարարության հրապարակմանը հաջորդող տարվանից արտոնագիրն ուժի մեջ պահելու պետական տուրքը նվազեցվում է 50 տոկոսով:

Ֆիզիկական անձինք, մինչեւ 25 աշխատող ունեցող իրավաբանական անձինք եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները գյուտի, օգտակար սարքի, արդունաբերական նմուշի արտոնագիր ստանալու եւ այն գործողության մեջ պահելու հետ կապված, ինչպես նաեւ ապրանքային եւ սպասարկման նշանի գրանցման եւ վկայական ստանալու հետ կապված՝ սույն օրենքի 18 հոդվածի առաջին մասով սահմանված տուրքերը վճարում են 75 տոկոս զեղչով, իսկ 25-ից 100 աշխատող ունեցող իրավաբանական անձինք եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները՝ 50 տոկոս զեղչով:

Արտոնագրված գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի օգտագործման մասին լիցենզային պայմանագիր գրանցելու պահից տվյալ արտոնագիրը գործողության մեջ պահելու համար հետագա տարեկան պետական տուրքը վճարվում է լրիվ դրույքաչափով:

Հոդված 29. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի գծով արտոնությունները

Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղեւորների) ելքի համար պետական տուրքից ազատվում են՝

ա) մինչեւ 12 տարեկան երեխաները.

բ) տարանցիկ ուղեւորները.

գ) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները.

դ) դիվանագիտական անձնագրերով Հայաստանի Հանրապետությունունից դուրս եկող անձինք.

ե) Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հիմնարկների աշխատակիցներն ու նրանց ընտանիքի անդամները.

զ) Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, սահմանադրական դատարանի նախագահի, վարչապետի կամ արտաքին գործերի նախարարի հրավերով Հայաստանի Հանրապետություն այցելող պաշտոնական անձինք եւ պատվիրակությունների անդամները:

Հոդված 30. Նոտարական կարգով հաստատվող գործարքների համար մի կողմին պետական տուրքից ազատելու դեպքում պետական տուրքի վճարումը

Նոտարական կարգով հաստատվող այն գործարքներով, որոնցով մի կողմը ազատվում է պետական տուրքի վճարումից, պետական տուրքը լրիվ չափով վճարում է մյուս կողմը:

Հոդված 31. Առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնությունների սահմանումը

Առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել՝

ա) Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ սույն օրենքի 14 հոդվածի 8-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքում.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ պետական տուրքի բոլոր տեսակների գծով՝ վճարողի փոխարեն պետական տուրքը վճարելու միջոցով.

գ) դատարանները կամ դատավորները՝ սույն օրենքի 9 հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից.

դ) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, դեսպանը կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը՝ սույն օրենքի 15 հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով վճարողի գույքային դրությունից:

ԳԼՈՒԽ VI

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ, ՎՃԱՐԵԼՈՒ, ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՆՔ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 32. Պետական տուրքի գանձումը

Պետական տուրքը գանձվում է մինչեւ համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը, եթե սույն օրենքով այլ կարգ սահմանված չէ կամ վճարողին պետական տուրքի գծով արտոնություն տրված չէ:

Առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պետական տուրքի գանձման լիազորությունը օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է պատվիրակվել ձեռնարկություններին, կազմակերպություններին: Այդ դեպքում դրանց իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցման նպատակով տվյալ ձեռնարկությունների, կազմակերպությունների կողմից կարող են սահմանվել վճարներ, որոնց չափը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հետ:

Հոդված 33. Գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար պետական տուրքը գանձելու առանձնահատկությունները

Արդյունաբերական սեփականության օբյեկտների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների հայտը մի քանի ինքնուրույն հայտերի բաժանելու դեպքում յուրաքանչյուր զատված հայտի համար պետական տուրքերը վճարվում են այնպես, ինչպես առանձին ինքնուրույն հայտի համար:

Եթե սույն օրենքի 18 հոդվածով նախատեսված որեւէ գործողության համար վճարված տուրքի գումարը չի համապատասխանում սահմանված չափերին, ապա պակաս վճարված պետական տուրքը ենթակա է վճարման՝ այդ մասին ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագիր տալու համար, ապրանքային եւ սպասարկման նշանների գրանցման եւ վկայական տալու համար, ապրանքի ծագման տեղանվան գրանցման եւ (կամ) օգտագործման իրավունքի վկայական տալու համար պետական տուրքերը վճարվում են այդ մասին լիազորված պետական կառավարման մարմնի որոշումը ստանալու օրվանից եռամսյա ժամկետում: Նշված տուրքերը կարող են վճարվել նաեւ այդ ժամկետի ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Այդ դեպքում դրանց չափերն ավելացվում են 50 տոկոսով:

Արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պաշտպանության հետ կապված տարեկան պետական տուրքերը վճարվում են արտոնագրի գործողության լրիվ տարվա համար: Տարեկան պետական տուրքի առաջին վճարումը կատարվում է մինչեւ արտոնագրի գործողության երկրորդ տարվա սկիզբը կամ արտոնագիր տալու համար սահմանված պետական տուրքի հետ մեկտեղ: Արտոնագրի գործողության յուրաքանչյուր հաջորդ տարվա համար պետական տուրքը վճարվում է գործողության ընթացիկ տարվա ընթացքում: Տարեկան պետական տուրքը կարող է վճարվել նաեւ սահմանված ժամկետի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Այս դեպքում պետական տուրքի չափն ավելացվում է 50 տոկոսով:

Նշանի գրանցման գործողության, ինչպես նաեւ ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայականի գործողության ժամկետը երկարացնելու համար տուրքը վճարվում է դրանց գործողության տասներորդ տարվա ընթացքում: Տուրքը կարող է վճարվել նաեւ այդ ժամկետի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Այս դեպքում տուրքի չափն ավելացվում է 50 տոկոսով:

Գյուտերի այն հայտերով, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմին են ներկայացվել մինչեւ 1993 թվականի հուլիսի 1-ը, ըստ էության փորձաքննություն անցկացնելու մասին դիմումները կարող են ներկայացվել սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում՝ սույն օրենքի 18 հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետով սահմանված պետական տուրքը վճարելու դեպքում:

Հոդված 34. Պատասխանատվությունը պետական տուրքը ճիշտ հաշվարկելու եւ ժամանակին գանձելու համար

Պետական տուրքը հաշվարկում եւ գանձում են սույն օրենքով սահմանված ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձինք:

Պետական տուրքը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դրվում է համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց վրա:

Հոդված 35. Պատասխանատվությունը պետական տուրքի գանձումն ուշացնելու համար

Պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց կողմից իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետեւանքով սահմանված ժամկետներում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները ենթակա են նրանցից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար մեկ տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ:

Սույն օրենքով սահմանված կարգով պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման գծով արտոնություն ունեցող վճարողի կողմից պետական տուրքի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են վճարողից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 1 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին:

Պետական տուրքի չգանձված կամ չվճարված գումարների, ինչպես նաեւ դրանց համար սույն օրենքով սահմանված տույժերի գանձումը կատարվում է դատական կարգով:

Հոդված 36. Պետական տուրքի վճարումը

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը վճարվում է հայկական դրամով:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս իրականացվող ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքերը կարող են վճարվել արտարժույթով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից նախորդ եռամսյակի վերջին ամսվա 20-րդ օրվա դրությամբ սահմանված՝ վճարման ներկայացվող արտարժույթի հաշվարկային փոխարժեքները:

Հոդված 37. Պետական տուրքի հաշվարկման եւ գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունը

Պետական տուրքի հաշվարկման եւ գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինները:

Հոդված 38. Պետական տուրքը վերադարձնելը

Պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝

ա) եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ.

բ) դատարանների եւ պետական արբիտրաժի կողմից դիմումները (գանգատները) վերադարձնելու կամ դրանց ընդունումը մերժելու, ինչպես նաեւ նոտարական գրասենյակների կողմից նոտարական գործողությունների կատարումը մերժելու, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտերի գրանցումը եւ ուրիշ գործողությունների ու ծառայությունների կատարումը մերժելու դեպքում.

գ) տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում կամ պետական արբիտրաժում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը.

դ) եթե հայցի ենթադրական գինը, որից դատարանը կամ պետական արբիտրաժը գանձել են պետական տուրքը, գործի քննության ընթացքում ճշտվել է, որի հետեւանքով պակասել է հայցի ընդհանուր գինը.

ե) գույքն արգելանքից ազատելու մասին հայցը բավարարելու դեպքում.

զ) պետական տուրք գանձող պետական մարմնի կողմից այս կամ այն գործողության կատարումը մերժելու դեպքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ.

է) մինչեւ համապատասխան մարմիններ դիմելը պետական տուրքը վճարողի կողմից համապատասխան ծառայություններ ստանալուց կամ գործողություններ կատարելուց հրաժարվելու դեպքում.

ը) անչափահաս երեխաներ չունեցող ամուսինների փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության ակտի գրանցման համար մուծված պետական տուրքը, եթե գրանցումը չի կատարվել ամուսինների հաշտվելու կամ նրանցից որեւէ մեկի չներկայանալու պատճառով.

թ) քաղաքացիական կացության ակտերը կամ նոտարական կարգով հաստատված պայմանագրերը, ժառանգության իրավունքի մասին վկայականները եւ այլ փաստաթղթերը չեղյալ դատարանով համարվելու դեպքում.

ժ) արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների դեմ գանգատարկողի օգտին գանգատարկման խորհրդի կամ դատարանի որոշում ընդունելու դեպքում (գանգատը ներկայացնելու համար վճարված պետական տուրքը).

ժա) Հայաստանի Հանրապետությունից մեկնելու փաստաթղթեր ստանալու համար քաղաքացիների վճարած պետական տուրքերը՝ մինչեւ մեկնելու թույլտվություն ստանալը արտասահման մեկնելուց հրաժարվելու դեպքում:

Հոդված 39. Պետական տուրքը վերադարձնելու կարգը

Ֆինանսական մարմինները պետական տուրքը վերադարձնում են այն բյուջեից, որին հաշվանցվել է գումարը՝ ոչ ուշ, քան սույն հոդվածով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

Պետական տուրքը վերադարձվում է վճարողի դիմումի համաձայն, եթե այն ներկայացվել է ֆինանսական մարմին՝ պետական տուրքի կամ նրա մի մասը վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարուց ոչ ուշ ժամկետում:

Պետական տուրքը կամ նրա մի մասը վերադարձնելու մասին ֆինանսական մարմին դիմում տալը կասեցնում է վերոհիշյալ ժամկետի ընթացքը:

Պետական տուրքը վերադարձնելու մասին դիմումին կցվում են դատարանի, պետական արբիտրաժի եւ պետական տուրք գանձող մյուս հիմնարկների տեղեկանքները՝ պետական տուրքը մասնակի կամ լրիվ վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին, ինչպես նաեւ պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերը:

Հոդված 40. Պետական տուրքը վերադարձնելու արժույթը

Պետական տուրքը վերադարձվում է հայկական դրամով, իսկ սույն օրենքի 36 հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերում՝ նաեւ արտարժույթով:

Հոդված 41. Պետական տուրքը գանձելիս համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների գանգատարկումը

Պետական տուրքը գանձելիս համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունները կարող են գանգատարկվել այն մարմին, որին անմիջականորեն ենթարկվում են այդ անձինք կամ՝ դատարան:

Վերադասության կարգով գանգատները քննության են առնվում եւ դրանց վերաբերյալ որոշումներ են ընդունվում ոչ ուշ, քան գանգատը ստացվելու օրվանից հնգօրյա ժամկետում:

Հոդված 42. Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը

Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը:

ԳԼՈՒԽ VII

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 43. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 1996 թվականի հուլիսի 19-ի «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ հետագա փոփոխություններով եւ լրացումներով հանդերձ:

Հոդված 44. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը վճարման ենթակա, սակայն չվճարված պետական տուրքերի գանձումը

Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը վճարման ենթակա, սակայն չվճարված պետական տուրքը գանձվում է պետական բյուջե՝ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահը գործող օրենսդրությամբ սահմանված չափերով:

*«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (10.01.1998թ., ՀՕ186) փոփոխվել եւ լրացվել է՝ 07.07.1998 ՀՕ-227, 27.07.1998 ՀՕ-337:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ՝ Լ. Տեր -Պետրոսյան

Երեւան
10 հունվարի 1998թ.
ՀՕ-186

19.06.1998	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին
06.07.1998	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
28.12.1998	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
12.10.1999	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
26.10.1999	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
30.05.2000	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
07.07.2000	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին
11.10.2000	«ՀՀ բյուջետային համակարգի մասին» եւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
06.11.2000	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
13.12.2000	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
15.12.2000	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
02.05.2001	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին
02.05.2001	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
11.09.2001	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
09.10.2001	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
06.11.2001	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
14.12.2001	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
03.04.2002	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու մասին
29.05.2002	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում լրացումներ կատարելու մասին
29.05.2002	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
12.06.2002	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
04.11.2002	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
19.11.2002	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին
11.12.2002	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
26.12.2002	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
31.03.2003	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
24.09.2003	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
18.11.2003	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
01.12.2003	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
13.12.2003	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
17.12.2003	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
03.03.2004	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
16.03.2004	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին

31.03.2004	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
11.05.2004	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
26.05.2004	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին
11.06.2004	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին
28.09.2004	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
24.11.2004	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
24.11.2004	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
06.12.2004	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
08.12.2004	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
14.12.2004	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
05.05.2005	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
25.05.2005	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին
25.05.2005	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
07.07.2005	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
07.07.2005	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին
04.10.2005	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
08.12.2005	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
15.12.2005	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին
16.12.2005	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
23.03.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին
23.05.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
23.05.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
01.06.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
01.06.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
13.06.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
27.11.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
27.11.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
27.11.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
29.11.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
05.12.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
05.12.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
05.12.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
20.12.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
25.12.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
25.12.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
25.12.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
25.12.2006	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
22.02.2007	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
22.02.2007	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ փոփոխություն կատարելու մասին
22.02.2007	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
09.04.2007	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
09.04.2007	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
09.04.2007	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
09.04.2007	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին
11.10.2007	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին
13.11.2007	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
28.11.2007	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում լատարելու մասին
28.11.2007	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
08.04.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
08.04.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին

08.04.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
19.05.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
26.05.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
10.06.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին
21.08.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին
21.08.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
22.10.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
23.10.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
27.11.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
26.12.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին
26.12.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
26.12.2008	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
19.03.2009	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
07.04.2009	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
28.04.2009	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
28.04.2009	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
28.04.2009	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
10.07.2009	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
17.09.2009	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
04.02.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին
08.04.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին
27.04.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
29.04.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
20.05.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
20.05.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
16.09.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
16.09.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
15.11.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
15.11.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին
08.12.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
08.12.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին
08.12.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
21.12.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
22.12.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
22.12.2010	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
01.03.2011	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
10.05.2011	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
11.05.2011	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
25.05.2011	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
23.06.2011	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
25.10.2011	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
28.11.2011	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին
30.11.2011	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին
07.12.2011	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
08.12.2011	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին
08.12.2011	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին
09.02.2012	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
19.03.2012	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
22.06.2012	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
24.10.2012	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
12.11.2012	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին

06.12.2012	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու եւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2010 թվականի ապրիլի 27-ի ՀՕ-55-Ն օրենքը չեղյալ ճանաչելու մասին
19.12.2012	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
19.12.2012	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
26.02.2013	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին
29.04.2013	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին
30.04.2013	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
19.06.2013	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին
19.06.2013	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
19.06.2013	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
20.06.2013	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
05.12.2013	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
11.12.2013	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին
11.12.2013	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
23.12.2013	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու եւ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու եւ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի ապրիլի 27-ի ՀՕ-55-Ն օրենքը չեղյալ ճանաչելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
21.06.2014	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
21.06.2014	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
19.11.2014	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին
20.11.2014	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին
20.11.2014	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
01.12.2014	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
17.12.2014	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
17.12.2014	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
07.05.2015	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
22.06.2015	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
23.06.2015	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին
06.10.2015	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
13.11.2015	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
17.12.2015	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
18.12.2015	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
21.12.2015	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
21.12.2015	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
19.02.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին
12.05.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
12.05.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
17.05.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին
29.06.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին
28.09.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
28.09.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն լրացումներ կատարելու մասին
19.10.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
20.10.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
17.11.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
15.12.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
16.12.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
16.12.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին
16.12.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
23.12.2016	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին

31.05.2017	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
25.10.2017	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին
25.10.2017	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
27.10.2017	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին
17.11.2017	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
17.11.2017	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին
06.12.2017	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին
08.12.2017	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
13.12.2017	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
21.12.2017	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
21.12.2017	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին
17.01.2018	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին
07.02.2018	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին
08.02.2018	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
09.02.2018	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
02.03.2018	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին
23.03.2018	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
13.06.2018	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին
13.06.2018	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին